ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Ք. Սևան

30.01.2019թ.
Ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ՝ Սարգիս Վարդանյան

Անդամներ՝ Վարդուհի Վարդանյան

Մարիաննա Առաքելյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/5 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ս. Վարդանյան)

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:

2.1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.

(Ս. Վարդանյան)

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 22.01.2019թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ **<<Լեբրոն>> ՍՊԸ-ի, <<Ֆոտոն>> ՍՊԸ-ի, Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանի և <<Սևանի հացի գործարան>> ՓԲԸ-ի՝** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի **<<Լեբրոն>> ՍՊԸ-ն, <<Ֆոտոն>> ՍՊԸ-ն, Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանը և <<Սևանի**

հացի գործարան>> ՓԲԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.

(Ս. Վարդանյան)

2.1 ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին **<<Լեբրոն>> ՍՊԸ-ն, <<Ֆոտոն>> ՍՊԸ-ն և <<Սևանի հացի գործարան>> ՓԲԸ-ն** հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

<<Լեբրոն>> ՍՊԸ-ի, <<Ֆոտոն>> ՍՊԸ-ի և <<Սևանի հացի գործարան>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /Հավելված 3/ համապատասխանում են սույն հրավերի պահանջներին:

Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանը ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը հրավերով սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացրել:

2.2 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 4-րդ ենթակետով որոշեց **Ա/Ձ Վիկտորյա Սամվելյանի հայտի** 5-րդ,6-րդ,9-րդ,10-րդ,13-րդ,14-րդ,15-րդ,16-րդ չափաբաժինները մերժել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

2.3 Քանի որ 5-րդ,6-րդ,9-րդ,10-րդ,13-րդ,14-րդ,15-րդ,16-րդ չափաբաժիններից միայն 10-րդ չափաբաժինն է, որ ունի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից, ուստի հանձնաժողովը ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով որոշեց 5-րդ,6-րդ,9-րդ,13-րդ,14-րդ,15-րդ և 16-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած, իսկ 10-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել **<<Ֆոտոն>> ՍՊԸ-ին**:

2.4 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին համակարգի միջոցով ուղարկել ծանուցում առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտով առաջադրված ապրանքի ամբողջական նկարագիրը:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ս. Վարդանյան

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:

(Ս. Վարդանյան)

4.1 Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝

<<Ֆոտոն>> ՍՊԸ-ին-11-րդ չափաբաժնով

<<Լեբրոն>> ՍՊԸ-ին-1-ին, 3-րդ,4-րդ,8-րդ,12-րդ,17-րդ,18-րդ չափաբաժիններով

<<Սևանի հացի գործարան>> ՓԲԸ-ին-7-րդ չափաբաժնով

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ս. Վարդանյան)

5.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/5 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 14.02.2018թ.-ին ժամը 11:30, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Վարդանյան

Անդամներ՝ Վ. Վարդանյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան